

Г.Б.ГАРИБДЖАНЫН, Геноцид армян перед судом истории. Ереван, Издательство "Гитупон", 1995, 107 стр.

Գ.Բ.ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ, Հայոց ցեղասպանությունը պատմության դատաստանի առաջ. Երևան, «Գիտություն» հրատ., 1995, 107 էջ

Ակադեմիկոս Գևորգ Ղարիբջանյանի «Հայոց ցեղասպանությունը պատմության դատաստանի առաջ» գրքույկը բացվում է ռուս ականավոր գրող, հրապարակախոս, հայկական կոտորածներին ականատես Սերգեյ Գորոդեցկու «Հայաստանին» ձոն-բանաստեղծությամբ:

Իբրև բնաբան հեղինակը ընտրել է Անատոլ Ֆրանսի խոսքը. «Խոցոտված է հայոց ոգին, բայց այն կրկին կհառնի: Այն քիչ արյունը, որ նա դեռ պահել է իր երակներում, գերթանկ արյուն է, որից կծնվեն հերոսական սերունդներ: Մի ժողովուրդ, որը չի ուզում մեռնել, չի մեռնի երբեք»:

Հեղինակը նախ տալիս է գեոցիոգրաֆիկ ժագումնաբանությունը, այն բնութագրելով իբրև ծանրագույն հանցանք մարդկության դեմ: «Հին և նոր պատմությունը, գրում է հեղինակը, - կոտորածների ու ցեղասպանության պատուհասներ շատ անգամներ է գրանցել իր էջերում, բայց 1915-ի հայերի ցեղասպանությունը, որ ծրագրեցին և ամենադաժան եղանակներով իրականացրեցին թուրք կառավարիչները, աննախադեպ էր մարդկության պատմության մեջ»:

Անցյալում միշտ էլ եղել են կոտորածներ, բայց հայերի զանգվածային բնաջնջումը իբրև թուրքիայի պետական քաղաքականություն, կյանքի կոչվեց 19-րդ դարավերջին, Սուլթան Համիդի տիրակալության տարիներին: Այս նույն քաղաքականությունը որդեգրեցին երիտթուրքերը և ապա Մուստաֆա Քեմալը, բնաջնջ-

ման ավելի հրեշավոր եղանակներ հորինելով: Հայերի ցեղասպանությունը կատարվեց կայգերական գերմանիայի լռեյան հովանավորությամբ ու նաև՝ անմիջական մասնակցությամբ: Թուրքերի կանխամտածված և իրականացրած ցեղասպանության զոհ դարձած մոտ երկու միլիոն հայեր, իսկ պատմական Հայաստանը կորցրեց իր տարածքների 9/10-րդը:

Թեև մեծ տերությունները՝ Անգլիան, Ֆրանսիան, Ռուսաստանը, ԱՄՆ-ը իրենց բողոքի ձայնը բարձրացրեցին թուրքական նախճիրների դեմ, նախազգուշացրին Բ. Ղոռանը, բայց չեղան հետևողական, և թուրքերը շարունակեցին իրենց սև գործը: Հայերի ցեղասպանության կազմակերպիչներն ու իրականացնողները եղան արյունարբու Կարմիր Սուլթան Համիդը, երիտթուրքերը և քեմալականները:

Արևելքի երբեմնի հզոր երկիրը միշտ էլ եղել է օտարների համար արշավանքների, կոտորածների, թալանի ասպարեզ: Հայաստանի վրայով հրով ու սրով անցել են հոները, պարսիկները, բյուզանդացիք, արաբները, մոնղոլ-թաթարական ցեղերը, սելջուկները և այլն, սակայն այդ ամենը մթազնվում են այն նախճիրների դիմաց, որ գործեցին թուրք բարբարոսները 19-րդ դարավերջին և 20-րդ դարասկզբին: Հեղինակը հիշատակում է այն բոլոր նենգավոր ծրագրերը, որ նախօրոք հղացան երիտթուրքերը և գործադրեցին հարմարագույն առիթով, որպիսին Համաշխարհային առաջին պատերազմն էր: Հիշատակված են գրեթե բոլոր ծածկագիր հեռագրերն ու կարգադրությունները, որ ուղարկել են երիտթուրքերի կառավարության ղեկավարները հայաբնակ գավառների թուրք պաշտոնյաներին՝ ի կատար ածելու իրենց դավանանենց որոշումները՝ հայերին բնաջնջելու վերաբերյալ: Հեղինակը բերել է թուրքերի բարբարոսության մի քանի օրինակներ՝ Գրիգոր Ջոհրայի, Սիամանթոյի, Վարուժանի, Ռուբեն Սևակի և հայ շատ մտավորականների սպանությունների, խոշտանգումների վերաբերյալ, դժնդակ միջոցներ, որոնք անծանոթ են եղել անգամ միջնադարյան ինկվիզիցիային: Բերված են արխիվային փաստաթղթեր, ականատեսների վկայություններ:

Թուրք պատմաբանների արդարացումները, թե հայերի տեղահանությունը թելադրված էր պատերազմական դրությամբ, և որ ցեղասպանություն չի եղել, եղել են ընդհարումներ, որոնց ընթացքում կոտորվել են հայ մարդիկ, ավելի շատ թուրքեր, գրքի հեղինակը համարում է հնարածին և արխիվային փաստաթղթերի հիման վրա հաստա-

տում նման պնդումների կեղծ լինելը: Ինչպես գրում է Գ.Ղարիբջանյանը՝ այս կարգի արդարացման փորձերը նպատակ ունեն խուսափել պատմության դատաստանից, քողարկելու պանիսլամիզմի՝ Մեծ Թուրանի ստեղծման գաղափարը, որի ճանապարհին կանգնած էին քրիստոնյա հայերը, ուստի նպատակադրվել էին բնաջնջել մի ողջ ժողովուրդ, մեկընդմիջտ լուծել Հայկական հարցը: Այն, ինչը չկարողացան ավարտի հասցնել երիտթուրքերը, կամեցան իրականացնել քեմալականները: Մուսթաֆա Քեմալի կարգադրությամբ էր, որ թուրքական զորքերը Կարաբեքիրի հրամանատարությամբ արշավանք սկսեցին Արևելյան Հայաստանի վրա՝ նույն այդ հայությանն իսպառ բնաջնջելու նպատակով: Այս առումով, գրքույկի հեղինակը բնորոշ է համարում Կարաբեքիրի 1920 թ. ապրիլին Քեմալին ուղղված հեռագիրը. «Մոտ օրերս ես պետք է հայտնեմ, որ Հայաստանը ջնջված է աշխարհի քարտեզի վրայից»: Քեմալականների այս մտադրության մասին է խոսում նաև ներքին գործերի նախարար Ահմեդ Մուխթար փաշայի 1920 թ. նոյեմբերի 2-ի հույժ գաղտնի դիմումը Կարաբեքիրին. «Հայաստանը գտնվում է մուսուլմանական ընդարձակ տարածքում, ուստի անհրաժեշտ է վերացնել այն ինչպես քաղաքանապես, այնպես էլ ֆիզիկապես»:

1920 թ. քեմալական զորքերը գրավեցին Ալեքսանդրապոլը, ավերեցին քաղաքն ու գավառի գյուղերը, սպանեցին հազարավոր մարդկանց: Մուստաֆա Քեմալի հակահայ քաղաքականությունը շարունակվեց հետո էլ, մինչև 1923 թվականը: «Մենք պետք է ոչնչացնենք հայկական բանակն ու հայկական պետությունը»-հայտարարել է նա 1922 թվականին: Եվ սա այն ժամանակ, երբ Հայաստանում հաստատվել էին խորհրդային կարգեր, և Հայաստանը գտնվում էր Խորհրդային Միության կազմում:

Գրքույկի հաջորդ դրվագում Գ. Ղարիբջանյանը անդրադարձել է արևմտահայության ինքնապաշտպանական մարտերին: Արևմտահայության ինքնապաշտպանական կռիվները արդարացի պայքար էր, եզրակացնում է հեղինակը, այդ պայքարի հնոցում է, որ ծնվեցին հայ ազգային հերոսները, ֆիդայիները, հայդուկները (թվարկված են անունները): Շնորհիվ ինքնապաշտպանական մարտերի բավական մեծ թվով հայեր փրկվեցին թուրքական յաթաղանի զարկից, նշում է հեղինակը: Խոսվում է նաև այդ հերոսների հիշատակը հավերժացնող հուշարձանների մասին, որ բարձրացվեցին ավելի ուշ տարիներին, Հայաստանի

զանազան վայրերում:

Գ. Ղարիբջանյանը մի առանձին դրվագ է հատկացրել հայ ժողովրդի ճակատագրին Ռուսաստանի մտավորականության արձագանքներին: Հեղինակային խոսքը այս դրվագում վերաբերում է գերազանցապես գրական ստեղծագործություններին, հրապարակված ժողովածուներին ու գրքերին, որոնցով ռուս նշանավոր մտավորականները իրենց բողոքի ձայնն են բարձրացրել ջարդարարների դեմ:

1896 թ., երբ աշխարհն իմացավ հայերի սահմնկեցուցիչ կոտորածների մասին, Մոսկվայում լույս տեսավ մի ժողովածու՝ «Հայերի վիճակը թուրքիայում...» վերնագրով, որի առաջաբանում Լ. Ա. Կոմարովսկին գրել է. «Թուրքիայի գոյության փաստը քրիստոնյա ժողովուրդների ամոթանքն է: Թուրքիան իրենից ներկայացնում է անարդարության խորհրդանիշ»:

1897 թ. Մոսկվայում լույս է տեսել «եղբայրական օգնություն տուժած թուրքահայերին» ժողովածուն՝ թիֆլիսահայ մեծահարուստ Գրիգոր Ավետի Ջանշիեվի միջոցներով ու նախաձեռնությամբ: Մինչ այդ՝ 1892-ին լույս էր տեսել Ջանշիևի «Մեծ բարեփոխումների էպոխա» կապիտալ աշխատությունը, որը շատ բարձր են գնահատել ռուս ականավոր գրողներն ու գրաքննադատները: Ջանշիևի գրքի մասին, որ վերափայտարակվել է տասը անգամ, Գլուստրենը գրել է. «Այս գիրքը սիմֆոնիա է: Այն հագեցած է պոեզիայով, վեհ գաղափարներով, մարդկային արժանապատվությամբ... Այս ժողովածուն մեր ժամանակի լուսավոր երևույթներից է, յուրօրինակ հանրագիտարան, բարության քրեստոմատյա: Այսպիսի գիրքը դաստիարակում է հասարակությամբ»: Հեղինակը տեղեկացնում է, որ Ջանշիևը անձնական կապեր է ունեցել ռուս մեծ մտածողներ Սալտիկով-Շչեդրինի, Լև Տոլստոյի, Ա. Չեխովի, Յ. Կեսելովսկու, Մամին Սիբիրյակի, Բունինի, Կորոլենկոյի և շատ այլ մտավորականների հետ: Հիշատակվում են նաև ռուս այն մտավորականների անունները, որոնք 1941 թ. եղել են կովկասյան ռազմաճակատում (Գորոդեցկի, Նեմիրովիչ-Ղանչենկո, Տոլստոյա՝ Լ. Տոլստոյի դուստրը) և որպես ականատեսներ պատմել են հայերի դժոխային վիճակի, թուրքերի բարբարոսությունների մասին:

Հեղինակը անդրադարձել է նաև խորհրդային իշխանության հաստատումից հետո ցեղասպանությանը վերաբերող փաստաթղթերին, մասնավորապես «Թուրքահայաստանի մասին» դեկրետին: Հիշատակ-

տում են նաև այն գրողները, ովքեր իրենց ստեղծագործություններում  
 արտացոլել են Հայոց ցեղասպանությանը:

Նույն սկզբունքով է շարադրվում և հաջորդ դրվագը, որը ներկայաց-  
 րում է Եվրոպայի մեծամուն գրողների ու մտավորականների արծա-  
 րապանքները հայ ժողովրդի ողբերգությանը: Հիշատակված են ամերիկա-  
 ղի միսիոներ Գրինի, իռլանդացի գրող-հրապարակախոս և գիտնական  
 Ջեյմի Դիլոնի, աշխարհահռչակ գրաքննադատ Գեորգ Բրանդեսի, ժան  
 Դորեսի, Էդվարդ Բերնշտեյնի, Անատոլ Ֆրանսի, Ռոմեն Ռոլանի, Անրի  
 Կարբոնի, Նանսենի, Լեփսիուսի, Վեգների, Մորգենթաուի, Պ. Յավորո-  
 յի, Ֆրանց Վերֆելի, քաղաքական գործիչներ Բլազոնի, Կոլարովի,  
 Ալադատոնի, Ռոզա Լյուքսեմբուրգի, Կարլ Լիբկնեխտի և ուրիշների ա-  
 րձույունները, ովքեր իրենց գրավոր ու բանավոր ելույթներով անարգանքի  
 լայունին են գամել թուրքական բարբարոսությունները: Հեղինակը մեջ-  
 աներումներ է կատարել նրանց ելույթներից: Ահա մի հատված Գեորգ  
 Փրանդեսի 1903 թ. փետրվարի 2-ին Բեռլինում ունեցած ելույթից.  
 «Պուք բոլորդ գիտեք, որ վերջին տասնամյակում թուրքահայաստանը  
 դարձել է այնպիսի սահմուկեցուցիչ անցքերի արենա, որպիսիք չգիտեն  
 ցեղասպանության նույնիսկ ամենամռայլ ժամանակները: Թուրքերի գոր-  
 ծած վայրագությունները անըմբռնելի են մարդկային ուղեղին... Հա-  
 ղրյուր հազարավորների անմեղ արյունը վրեժ է գոչում առ երկինք»:

Հեղինակը առանձին դրվագ է նվիրել «Թուրք ջարդարարները  
 ցեղասպանության դատաստանի առաջ» հարցի լուսաբանմանը: «Հենց  
 միայն երիտթուրքերի ղեկավարների 1919 թ. դատավարության նյութե-  
 րը բավական են հաստատելու համար հայերի ցեղասպանության կան-  
 խամտածված ու ծրագրված լինելը: Պնդել հակառակը անհիմն է ու ի-  
 մաստազուրկ», - եզրակացնում է հեղինակը:

Վերջում բերված է նաև Հայաստանի կառավարության 1995-ի մար-  
 տի 7-ի որոշումը՝ ցեղասպանության թանգարան ստեղծելու մասին: